Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-602[1]-29.05.2023-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Փոստային կապի մասին» 2004 թվականի դեկտեմբերի 14-ի ՀՕ-46-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «ա» կետում «ունենալ» բառից հետո լրացնել «կառավարության որոշմամբ հաստատված նվազագույն պահանջներին համապատասխան» բառերը.

2) 1-ին մասը լրացնել «ը» կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«ը) ապահովել մաքսային մարմնի համար հասանելիություն սույն հոդվածի 1-ին մասի «ա» կետում նշված սարքավորումներին և միջոցներին:».

3) 2-րդ մասից հետո լրացնել նոր մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«Սույն հոդվածի առաջին մասի «ը» կետում նշված հասանելիության ձևաչափը սահմանվում է փոստային կապի բնագավառում լիազորված պետական կառավարման մարմնի և մաքսային մարմնի համատեղ հրամանով:»:

Հոդված 2. Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել «թ» կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«թ) հաստատում է սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով նախատեսված տեխնոլոգիական սարքավորումներին և մեքենայացման, ավտոմատացման և տեղեկատվայնացման միջոցներին ներկայացվող նվազագույն պահանջները և դրանց միջոցով փոստային և սուրհանդակային կապի օպերատորից, ինչպես նաև վերջիններիս միջոցով փոստային կապի և սուրհանդակային կապի

ծառայություններից օգտվողներից հավաքագրվող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2023 թվականի նոյեմբերի 1-ից:

Հոդված 4. Սույն օրենքի 1-ին հոդվածի 3-րդ կետով և 2-րդ հոդվածով նախատեսված իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո երեք ամսվա ընթացքում:

Հոդված 5. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոստային կամ սուրհանդակային կապի օպերատոր համարված անձինք սույն օրենքի 2-րդ հոդվածով նախատեսված իրավական ակտի ուժի մեջ մտնելու օրվանից 9 ամսվա ընթացքում իրենց տեղեկատվական համակարգերը պետք է համապատասխանեցնեն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված պահանջներին:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

~~*Առաջին*~~ *Երկրորդ ընթերցում*

Կ-602[1]-29.05.2023-ՏՀ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Փոստային կապի մասին» 2004 թվականի դեկտեմբերի 14-ի ՀՕ-46-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «ա» կետում «ունենալ» բառից հետո լրացնել «կառավարության որոշմամբ ~~սահմանված~~ հաստատված նվազագույն պահանջներին համապատասխան» բառերը.

2) 1-ին մասը լրացնել «ը» կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«ը) ապահովել մաքսային մարմնի համար ~~ամբողջական~~ հասանելիություն սույն հոդվածի 1-ին մասի «ա» կետում նշված սարքավորումներին և միջոցներին:».

3) 2-րդ մասից հետո լրացնել նոր մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«Սույն հոդվածի առաջին մասի «ը» կետում նշված ~~ամբողջական~~ հասանելիության ձևաչափը սահմանվում է փոստային կապի բնագավառում լիազորված պետական կառավարման մարմնի և մաքսային մարմնի համատեղ հրամանով:»:

Հոդված 2. Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել «~~ը~~թ» կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«~~ը~~թ) հաստատում է սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով նախատեսված տեխնոլոգիական սարքավորումներին և մեքենայացման, ավտոմատացման և տեղեկատվայնացման միջոցներին ներկայացվող նվազագույն պահանջները և դրանց միջոցով փոստային և սուրհանդակային կապի օպերատորից, ինչպես նաև վերջիններիս միջոցով փոստային կապի և սուրհանդակային կապի ծառայություններից օգտվողներից հավաքագրվող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2023 թվականի ~~հոկտեմբերի~~ նոյեմբերի 1-ից:

Հոդված 4. Սույն օրենքի 1-ին հոդվածի 3-րդ կետով և 2-րդ հոդվածով նախատեսված իրավական ակտերն ընդունվում ~~է~~են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո երեք ամսվա ընթացքում:

Հոդված 5. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոստային կամ սուրհանդակային կապի օպերատոր համարված անձինք սույն օրենքի 2-րդ հոդվածով նախատեսված իրավական ակտի ուժի մեջ մտնելու օրվանից 9 ամսվա ընթացքում իրենց տեղեկատվական համակարգերը պետք է համապատասխանեցնեն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ ~~սահմանված~~ հաստատված պահանջներին:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Կ-602-29.05.2023-ՏՀ-011/1, Կ-602[1]-29.05.2023-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջար-կություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	«Լիցենզավորման մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված	Առաջարկվում է հանել «(այսուհետ՝ Օրենք)» բառերը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Լիցենզավորման մասին» օրենքին նախագծում այլևս հղում չի կատարվում:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	«Լիցենզավորման մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված, 1-ին կետ, «Փոստային կապի մասին» օրենքում լրացումներ	«Լիցենզավորման մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով, որպես փոստային կապի գործունեության իրականացման ոլորտում լիցենզիայի կասեցման հիմք, սահմանված է՝ «օրենքով նախատեսված տեխնոլոգիական սարքավորումներին և մեքենայացման, ավտոմատացման և	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	Ընդունվել է:

		կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված, 2-րդ կետ, 3-րդ կետ	տեղեկատվայնացման միջոցներին մաքսային մարմնին ամբողջական հասանելիություն չտրամադրելը»: «Փոստային կապի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետով փոստային կապի, սուրհանդակային կապի օպերատորի և ազգային օպերատորի համար պարտականություն է սահմանված մաքսային մարմիններին համապատասխան սարքավորումներին և միջոցներին ամբողջական հասանելիություն ապահովելը: Նախագծերում որոշակիությունն ապահովելու նպատակով «ամբողջական» բառերը հանվել են:		
3.	ՀՀ կառավարություն	«Լիցենզավորման մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված, 2-րդ և 3-րդ կետեր	Առաջարկում ենք օրենքի նախագծի 2-րդ և 3-րդ կետերը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝ «2) 1-ին մասից հետո լրացնել նոր 1 1-ին մաս՝ հետևյալ բովանդակությամբ. «1.1. Սույն հոդվածի 1-ին մասի 11.1-ին կետով նախատեսված դեպքերը հավաստվում են մաքսային մարմնի կողմից՝ փոստային կապի բնագավառում լիազոր պետական կառավարման մարմնին	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:

			պաշտոնական փաստաթղթաշրջանառության համակարգի միջոցով գրավոր հավաստում ուղարկելու միջոցով:»: 3) 2-րդ մասում «և 11-րդ» բառերը փոխարինել «, 11-րդ և 11.1-ին» բառերով.» ««Լիցենզավորման մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծում անհրաժեշտ է ապահովել օրենքի 36-րդ հոդվածի մասերում կատարվող փոփոխության և լրացումների հաջորդականությունը, մասնավորապես, նախագծի 1-ին հոդվածի 3-րդ կետի դրույթն անհրաժեշտ է նախատեսել 2-րդ կետով, իսկ 2-րդ կետի դրույթը՝ 3-րդ կետով:		
4.	ՀՀ կառավարություն	«Լիցենզավորման մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված	Նախագծի ուժի մեջ մտնելու ժամկետը առաջարկվում է նախատեսել 2023 թվականի նոյեմբերի 1-ից:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:
5.	ՀՀ կառավարություն	«Փոստային կապի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված, 3-րդ կետ	««Փոստային կապի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 3-րդ կետում առաջարկվում է հստակ նշել, թե որ մասից հետո է նախատեսվում սահմանել լրացվող նոր մասը: Ըստ այդմ, «3)» նշանից	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:

			հետո առաջարկում ենք լրացնել «2-րդ մասից հետո» բառերով:		
6.	ՀՀ կառավարություն	«Փոստային կապի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված, 1-ին կետ, 5-րդ հոդված,	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին կետով նախատեսվում է «Փոստային կապի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետում «ունենալ» բառից հետո լրացնել «կառավարության որոշմամբ սահմանված նվազագույն պահանջներին համապատասխան» բառերը, իսկ նույն նախագծի 5-րդ հոդվածում կիրառվում է «կառավարության որոշմամբ սահմանված պահանջներին» ձևակերպումը, մինչդեռ՝ «Փոստային կապի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածով նախատեսված լրացման արդյունքում Կառավարությունը փոստային կապի բնագավառում հաստատելու է համապատասխան պահանջները: Նկատի ունենալով, որ լիազորող նորմը վերաբերում է նվազագույն պահանջները հաստատելուն, ուստի առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածում «կառավարության որոշմամբ սահմանված նվազագույն պահանջներին համապատասխան» բառերը փոխարինել «կառավարության որոշմամբ հաստատված նվազագույն	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	Ընդունվել է:

			պահանջներին համապատասխան» բառերով, իսկ նախագծի 5-րդ հոդվածում «կառավարության որոշմամբ սահմանված պահանջներին» բառերը՝ «կառավարության որոշմամբ հաստատված պահանջներին» բառերով:		
7.	ՀՀ կառավարություն	«Փոստային կապի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածով, որպես տվյալ նախագծից բխող ենթաօրենսդրական ակտի ընդունման ժամկետ, սահմանված է միայն տեխնոլոգիական սարքավորումներին և մեքենայացման, ավտոմատացման և տեղեկատվայնացման միջոցներին ներկայացվող նվազագույն պահանջները և դրանց միջոցով փոստային և սուրհանդակային կապի օպերատորից, ինչպես նաև վերջիններիս միջոցով փոստային կապի և սուրհանդակային կապի ծառայություններից օգտվողներից հավաքագրվող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը ընդունելու ժամկետը, մինչդեռ Նախագծով բացակայում են փաստաթղթերը և տեղեկությունները հավաքագրելու համար սահմանված մաքսային մարմնի և փոստային կապի բնագավառում լիազոր պետական կառավարման մարմնի համատեղ	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:

			հրամանի ընդունման ժամկետը: Հիմք ընդունելով վերոգրյալը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասը՝ առաջարկվում է նախագծում սահմանել նաև նշված ենթաօրենսդրական ակտի ընդունման ժամկետը:		
8.	ՀՀ կառավարություն	«Փոստային կապի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված	«Փոստային կապի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածում օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասը լրացվում է «ը» կետով: Այդ առումով հարկ է նշել, որ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասում արդեն իսկ առկա է «ը» կետ, ուստի կետերի համարակալումն անհրաժեշտ է վերանայել, մասնավորապես, «ը» տառը փոխարինել «թ» տառով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:
9.	ՀՀ կառավարություն	«Փոստային կապի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդված	Նախագծի ուժի մեջ մտնելու ժամկետը առաջարկվում է նախատեսել 2023 թվականի նոյեմբերի 1-ից:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է: